

**Շրջիկ գրադարանի այցը**  
**Արարատի մարզի Մխչյան համայնքի**  
**Սուրբ Հովհաննես եկեղեցու գրադարան**

Արարատի մարզի Մխչյան գյուղում 1890-ական թվականներին կառուցված Սուրբ Հովհաննես եկեղեցում 2017թ. եկեղեցու և համայնքի ջանքերով ստեղծվել է գրադարան, որը գործում է եկեղեցու երիցատանը: Եկեղեցուն կից գործում է նաև կիրակնօրյա դպրոց: Գրադարանը բավական հետաքրքրություն է առաջացրել համայնքի դպրոցականների ու երիտասարդների շրջանում և բազմաթիվ ընթերցողներ ունի:

Արարատյան Հայրապետական թեմի Մխչյանի Ս. Հովհաննես եկեղեցու հոգևոր հովիվ Միքայել քահանա Նուրիջանյանը դիմել է Հայաստանի ազգային գրադարանին՝ գրականության համալրման խնդրանքով:

Օգոստոսի 31-ին Հայաստանի ազգային գրադարանի մի խումբ աշխատակիցներ Շրջիկ գրադարանով այցելեցին Արարատի մարզի Մխչյան համայնք և Սուրբ Հովհաննես եկեղեցու գրադարանին նվիրաբերեցին 200 միավոր գրականություն: